ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ с.АРЗНИ

Կոտայքի մարզ գ.Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 6
համայնքապետարանի վարչական շենք
Հեռ. /0222 /94-8-80,.Էլ .փոստ: arzni.kotayq@mta.qov.am

Котайкский марз, село Арзни улица 5 переулок-1
№6 управления муниципалитета
Тел. /0222 /94-8-80, эл. почта: arzni.kotayq@mta.qov.am

h/պ-62
20 մայիսի 2017թ.

ՀՀ Կոտայքի մարզպետ
պարոն Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Համաձայն «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները, ներկայացվում է Արզնի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 7 հերթական նիստի որոշումը :

Համայնքի ղեկավար Վ.Վենիամինով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2017 թվականի №25

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ №7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջները ՝

Համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել՝ համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 18-ի №7 հերթական նիստի օրակարգը՝

1.Արզնի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի կազմը հաստատելու մասին

2.Արզնի հանայքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգն ու պայմանները հաստատելու մասին

3.Արզնի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման , աղբահանության վճարի հաշվարկման և գանձման (մուտքագրման) կարգը հաստատելու մասին:

Կողմ՝ (9), Դեմ՝ (0), Ձեռնպահ (0),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ՋԱՒԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2017 թվականի №26-Ա

ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Արզնի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի № 47-Ն որոշմամբ հաստատված Արզնի համայնքի ավագանու կանոնակարգի 22-րդ և 23-րդ կետերը՝

Համայնքի ավագանին **որոշում է**

1.Ստեղծել Արզնի համայնքի ավագանու նիստերի օրակարգում ընդգրկվող հարցերի քննարկման մշտական հանձնաժողով:

2.Հանձնաժողովի կազմը սահմանել 4 և հաստատել անհատական կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտուշ Լալայան

հանձնաժողովի անդամներ՝ Զաիլ Նադոյան

Պոլինա Իվանովա

Միխայել Վենիամինով

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ՝ (9), Դեմ՝ (0), Ձեռնպահ (0),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2017 թվականի №27-Ն

ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 41-րդ կետով ,«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝

Համայնքի ավագանին **որոշում է**

1.Հաստատել Արզնի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն №1 հավելվածի:

2.Հաստատել Արզնի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն №2 հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ՝ (9), Դեմ՝ (0), Ձեռնպահ (0),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՎԵՆԻԱՄԻՆՈՎ

Հավելված 1
Արզնի համայնքի ավագանու
2017 թվականի մարտի 18-ի N 27-Ն որոշման

ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Արզնի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) տեղադրման կարգը: Կարգն ընդունվել է «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

2. Արտաքին գովազդը (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում գովազդի միջոցներով (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլն) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ: ՀՀ կառավարության 2002թ. մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը արտաքին գովազդ չի համարվում: Արտաքին գովազդ են համարվում «Արզնի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչներով» (այսուհետ՝ Չափորոշիչներ) սահմանված մակերեսից ավելի մակերեսով տեղադրվող ֆիրմային նշանները և գովազդվող ապրանքանշանները:

3. Կանոնները տարածվում են բոլոր այն տարածքների և տրանսպորտային միջոցների վրա, որտեղ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգով Արզնի համայնքի ղեկավարի որոշմամբ հողամասը օգտագործման իրավունքով հանձնվում է դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին)՝ միաժամանակ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարացնելու պայմանով:

5. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, Կարգի և Պայմանների պահանջներին:

6. «Գովազդի մասին» ՀՀ օրենքին, Կարգին և Պայմաններին համապատասխան Արզնի համայնքապետարանը որոշում է արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները:

ԳՈՎԱԶԴԻ (ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7. Թույլտվությունը (հետագայում՝ թույլտվություն) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն և սահմանված Կարգով տրվում է Արզնի համայնքի ղեկավարի կողմից՝ Ձև 1-ով սահմանված ձևաչափով:

8. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Արզնի համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, գտնվելու վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:

9. Արզնի համայնքապետարանը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը Կարգի և Պայմանների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում Արզնի համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղաբաշխման (տեղադրման) ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:

10. Նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Արզնի համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

11. Թույլտվությունը հանդիսանում է հաշվառման փաստաթուղթ, որը գրանցվում է Արզնի համայնքապետարանի թույլտվությունների հաշվառման մատյանում, իսկ թույլտվության պատճենը և հաշվառման մատյանը պահվում են համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան համայնքային ծառայողի մոտ:

12. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի), հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում, եթե՝

12.1 ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Կարգի և Պայմանների պահանջներին.

12.2 խախտվում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջները.

12.3 գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

13. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

14. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Արզնի համայնքապետարանին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Արզնի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի հետ:

15. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի, Կարգի , Պայմանների և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջներին:

16. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Արզնի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան հարցերով զբաղվող մասնագետի

հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

17. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

18. Գովազդի տեղադրման թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

19. Կարգով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Արզնի համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Արզնի համայնքապետարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Արզնի համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

21. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն Արզնի համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

22. Կարգին համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Արզնի համայնքի բյուջե:

23. Գովազդատուի (գովազդակրի) կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում՝ Արզնի համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և

հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է գովազդատուին (գովազդակրին):

24. Գովազդատուները (գովազդակիրները) իրավասու են օրենքով սահմանված կարգով դատական կարգով բողոքարկել գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կապակցությամբ Արզնի համայնքի ղեկավարի որոշումներն ու գործողությունները:

25. Արզնի համայնքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով և գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Արզնի համայնքի ղեկավարը:

26. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Ձև1

ԱՐՋՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ____

Տրվում է _____

գովազդատուի և (կամ) գովազդակրի անվանումը

_____

արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) վայրը (տեղը)

_____

արտաքին գովազդ տեղաբաշխելու (տեղադրելու) միջոցը

(վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պաստառ և այլն)

_____

գովազդի տեսակը

_____

գովազդային նյութի անվանումը

Գովազդի մակերեսը _____ քմ

Թույլտվության գործողության ժամկետը՝ «__»_____20_թ.

առ՝ «__» _____20_թ.

Կ.Տ.

Արզնի համայնքի ղեկավար՝ _____

Հավելված 2
Արզնի համայնքի ավագանու
2017 թվականի մայիսի 18-ի N27-Ն որոշման

ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արզնի համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման պայմանները (այսուհետ՝ Պայմաններ), մշակվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Արզնի համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգի և պայմանների» (այսուհետ՝ Կարգ) համապատասխան:

2. Արզնի համայնքի տարածքում արտաքին գովազդի միջոցների (այսուհետ՝ գովազդ) տեղադրումը թույլատրվում է Կարգի և Պայմանների պահանջներին համապատասխան:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Արտաքին գովազդի միջոց են համարվում Արզնի համայնքի վարչական տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Գովազդի տեղադրմանը ներկայացվող պահանջները՝

1.1 Արզնի համայնքի տարածքում գովազդը և դրանց առանձին մասերը չեն կարող տեղադրվել երթևեկելի մասի մակերևույթից 6 մ-ից ցածր բարձրությամբ եզրաքար չունեցող ճանապարհի կողքին:

1.2 Գովազդի միջոցները չպետք է՝

• խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը.

• սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա.

• առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում (լույսով, այդ թվում՝ նաև անդրադարձող).

• հանդիսանան հետիոտնի շարժմանը արգելք.

• լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա:

1.3 Գովազդի տեղադրումը տրանսպորտային միջոցների վրա չպետք է հակասի ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման պահանջին:

1.4 Գովազդ տեղադրել չի թույլատրվում՝

• բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր.

• ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում.

• ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

• փողոցների խաչմերուկների սահմաններից և դրանց մոտեցումներից 20 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

2. Գովազդի առանձին կանգնած մնայուն միջոցների տեսակները՝

Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից.

2.1 Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝

- մեծ չափերի—3մ X 4մ, 3մ X 6մ և այլ չափերի
- միջին չափերի—1.8մ X1.2մ, 2մ X 3մ
- փոքր չափերի—0.6մ X 0.9մ և ավելի փոքր չափերի.

2.2 Վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

- երկկողմանի կատարում,
- միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է.

2.3 Փողոցներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

- 10 քմ—12 քմ՝ 50 մ—75 մ
- 6 քմ—10 քմ՝ 30 մ—50 մ
- 4 քմ—6 քմ՝ 20 մ—30 մ
- 2 քմ—4 քմ՝ 10 մ —20 մ
- մինչև 2 քմ՝ 10 մ.

2.4 մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկայության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ:

3. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Արզնի համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղաբաշխվող (տեղադրվող) արտաքին գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակները՝

3.1 Տանիքային կայանքները ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

3.1.1 Տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից:

3.1.2 Ամրակցման տարրերը, ինչպես և կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով:

3.1.3 Կոնստրուկցիաների միջոցով տանիքային կայանքի գովազդային վահանակի տեղադրումը պետք է համաձայնեցվի Արզնի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի հետ:

3.2 Պատի մեծանկարներ (պաննո) կոչվում են արտաքին գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

3.2.1 Պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտածածկում է պատը: Պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից:

3.2.2 Պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

3.3 Բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուներին կամ շենքերի վրա: Համապատասխան թույլտվության դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել քաղաքային լուսավորման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա:

3.3.3 Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3մ բարձրության վրա:

3.3.4 Հիմքերի վրա կանգնեցված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայթի կողմը: Արգելվում է մեկից ավելի բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:

3.3.5 Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է կողմերի ընդհանուր մակերեսով:

4. Էկրանավորող սարքավորումներն արտաքին գովազդի և տեղեկատվության միջոց են:

4.1 Դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր:

4.2 Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

5. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ -ից ոչ պակաս բարձրության վրա:

6. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան:

7. Չափորոշիչներում չնշված և ՀՀ կառավարության 2002 թ. մարտի 19-ի հ. 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումն իրականացվում Արզնի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի առաջարկությունների հիման վրա:

8. Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումը.

8.1 Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումն իրականացվում է ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՋՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
գ. Արզնի 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6
համայնքապետարանի վարչական շենք N1
Հեռ. /0222 /94-8-80 arzni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2017 թվականի №28-Ն

ԱՐՋՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ (ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ) ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 20-րդ կետով ,«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով `

Համայնքի ավագանին **որոշում է**

1.Հաստատել Արզնի համայնքում աղբահանության վճար վծարողների հաշվառման , աղբահանության վճարի հաշվարկման և գանձման (մուտքագրման) կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ՝ (9), Դեմ՝ (0), Ձեռնպահ (0),

ԻԼՅԱԵՎ ՊՅՈՏՐ
ԻՎԱՆՈՎԱ ՊՈԼԻՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ՂՈՒԼՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՆՅԱ
ՄԻԽԱՅԼՈՎ ՍՈՒՐԵՆ
ՅԱԿՈՒԲՈՎԱ ՏԱՏՅԱՆԱ
ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ
ՍԱՐԽՈՇԵՎ ՄԵԼՍԻԿ
ՎԵՆԻԱՄԻՆՈՎ ՄԻԽԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

Հավելված
Արզնի համայնքի ավագանու
2017թվականի մարտի 18-ի N 28 -Ն որոշման

ԿԱՐԳ

ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ (ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ)

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Արզնի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի (տեղական վճարի) դրույքաչափերը սահմանելու մասին Արզնի համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն Կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Արզնի համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության վճարի (տեղական վճար) արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար:

6. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է համապատասխան համակարգչային ծրագրով (այսուհետ Ծրագիր):

7. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է Արզնի համայնքապետարանի կողմից շահագործվող Ծրագրով, իսկ Ծրագրում տվյալների մուտքագրումը կատարվում է Արզնի համայնքապետաքրանի աշխատակիցը:

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

8. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով Արզնի համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական վճարների (կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար) դրույքաչափերից , ընդ որում՝

1) Կենցաղային աղբի համար՝

ա)ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցողի և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար,

բ)ըստ բնակելի նշանակության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար:

2) Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա)ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար,

բ)ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար:

IV. Աղբահանության վճարի գանձումը (մուտքագրումը)

9. Աղբահանության վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե իրականացվում է Արզնի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված Օպերատորի կողմից, այսուհետ՝ Գանձող:

10.Գանձողը ստանում է Արզնի համայնքապետարանի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Արզնի համայնքի ղեկավարի կողմից լիազորված մարմնի (այսուհետ՝ Համակարգող) և Գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձման և ընդունման արձանագրություն:

11. Համակարգողն իրականացնում է Գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:

12. Գանձողը, Համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

13. Գանձողը պարտավոր է գանձված գումարը բանկային կամ փոստային համակարգի միջոցով փոխանցել համապատասխան հաշվին՝ կանխիկ դրամի հավաքման պահից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Օպերատորի աշխատակիցը՝ մինչև հսկիչ-հավաքագրողներից անդորրագրերի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը պետք է անդորրագրերի տվյալները մուտքագրի Ծրագիր:

Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, Գանձողը պարտավոր է հանձնել Համակարգողին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

14. Արզնի համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի գանձման (մուտքագրման) լիազորություններով օժտված Օպերատորը Արզնի համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

16. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

17. Աղբահանության վճարի անդորրագրերի հանձման և ընդունման արձանագրության, կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման (մուտքագրման) գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Արզնի համայնքի ղեկավարի կողմից